ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2021

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Ձևաթղթի լրացման կանոնները

Ընտրովի պատասխանով առաջադրանքները 1-36-ն են, կարճ պատասխանով առաջադրանքները՝ 37-80-ը: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

1. ***Ընտրովի պատասխանով առաջադրանքներում*** ձևակերպվում է հարցը և տրվում է պատասխանի չորս տարբերակ: Ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը:
2. ***Կարճ պատասխանով առաջադրանքները*** հաջորդականության, համապատասխանության, բոլոր ճիշտ կամ բոլոր սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ են, որոնց ճիշտ պատասխանին համապատասխանող ***թվերը*** պետք է տեղադրել ձևաթղթի համապատասխան վանդակներում՝ **յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ**:

44-46-րդ առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրել մեկ նիշ՝ պահպանելով տառերի և թվերի ճիշտ համապատասխանությունը:

47-50-րդ և 76-80-րդ առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է ***ժամանակագրական*** ճիշտ հաջորդականությամբ դասավորել իրադարձությունները՝ պահպանելով թվերի ճշգրիտ հերթականությունը:

Մնացած առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ պատասխանների համարները, որոնց քանակը կարող է լինել 1, 2 կամ 3: Այս տիպի առաջադրանքներում ***պարտադիր չի*** պահպանել թվերի ճիշտ հերթականությունը:

37-80-րդ առաջադրանքների պատասխանների համար միավոր է տրվում այն դեպքում, եթե նշված են ***բոլոր*** ճիշտ պատասխանները:

Ցանկանում ենք հաջողություն

1 **Ի՞նչ իրադարձության մասին է ներկայացվող մեջբերումը՝**

«Քաղաքից տեղում էին նետեր, ինչպես անձրևն ամպերից, պարսատիկների քարերն անձրևի կաթիլների պես. . . պարիսպներից թափվում էին ամբողջ տարին աղմկոտ սուլոցով: Օրերն անցնում էին, ամիսները՝ երկարում. . . ».

1) Անիի պաշտպանություն
2) Տիգրանակերտի պաշտպանություն
3) Արտագերսի պաշտպանություն
4) Արատտայի պաշտպանություն

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 2-5-րդ հարցերին:

2 **Պատմական ո՞ր աշխատությունից է ստորև բերված մեջբերումը:**

«Այսուհետև զորացե՛ք և քա՛ջ եղեք՝ որպես քաջարի զավակներ, և ոչ ոքից ու ոչնչից մի՛ երկնչեք, որովհետև ահա հասել է քրիստոնյաների փրկության ժամանակը»:

1) «Պատմութիւն Դավիթ բեկին»
2) «Գիրք պատմութեանց»
3) «Պատմութիւն պատերազմաց»
4) «Համառօտ պատմութիւն Աղուանից»

3 **Ո՞ր վայրում հավաքված զորքին են քաջալերել վերը բերված խոսքերով:**

1) Զևա
2) Հալիձոր
3) Չոլակ
4) Չավնդուր

4 **Ո՞վ է զորքին քաջալերել վերը մեջբերված խոսքերով:**

1) Եսայի Հասան Ջալալյան
2) Վախթանգ VI
3) Դավիթ բեկ
4) Մխիթար սպարապետ

5 **Ե՞րբ է տեղի ունեցել մեջբերման մեջ նշվող իրադարձությունը:**

1) 1722 թ.
2) 1723 թ.
3) 1727 թ.
4) 1724 թ.

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 6-8-րդ հարցերին:
Նրանք հայ ժողովրդին կոչ էին անում «հրաժարվելու ոչ միայն Մեծ Հայաստանի ...այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես .... անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից: Հայաստանին... այլ ելք չի մնում, քան հաշտվել դրա հետ և համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և՛ իր երբեմնի հողատարածքները, և՛ իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները»:

6 **Ո՞ր իրադարձության հետ կապված է ասվել հետևյալ տեսակետը:**

1) ԽՍՀՄ–ի կազմավորում
2) Բաթումի պայմանագրի կնքում
3) Սևրի պայմանագրի կնքում
4) ռուս–թուրքական երկրորդ կոնֆերանս

7 **Ովքե՞ր էին այս տեսակետի հեղինակները:**

1) ադրբեջանցիները
2) քեմալականները
3) բոլշևիկները
4) վրացիները

8 **Ո՞ր հողատարածքների մասին է խոսքը:**

1) արևմտյան
2) անատոլիական
3) հայկական
4) արցախյան

9 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը:**
«Հայ տարրը պետք է հիմքից արմատախիլ անել, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր հողում, և մոռացվի բուն այդ անունը: Հիմա պատերազմ է, այսպիսի հարմար առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունն ու համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ եթե նրանք իմանան էլ, կկանգնեն կատարված փաստի առաջ, և դրանով իսկ հարցը կսպառվի»:

1) Էնվեր
2) Թալեաթ
3) Նազըմ
4) Ջեմալ

Կարդացե՛ք մեջբերված խոսքը և պատասխանե՛ք 10 -11-րդ հարցերին:

«Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ .... պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ»:

10 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը:**

1) Գեորգի Ժուկով
2) Հովհաննես Բաղրամյան
3) Համազասպ Բաբաջանյան
4) Նիկոլայ Տիխոնով

11 **Ո՞ր քաղաքի անունն է բաց թողնված մեջբերման մեջ:**

1) Լենինգրադ
2) Մոսկվա
3) Ստալինգրադ
4) Սևաստոպոլ

12 **Ո՞ր գրքից է մեջբերված հատվածը:**

«... բանն այն է, որ եթե հասարակ ժողովրդից որևէ մեկը սխալվում կամ մեղանչում է, ապա միայն իրեն է վնաս բերում, իսկ իշխանի սխալվելը ոչ միայն վնասներ, այլև երբեմն մեծամեծ պատուհասներ ու աշխարհավերություններ է բերում ամբողջ ազգին... »:

1) «Ազգապատում»
2) «Որոգայթ փառաց»
3) «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»
4) «Մարտական հրահանգներ»

13 **Ի՞նչ նպատակով է հրատարակվել Մխիթարյան միաբանության «Տարեգրություն» պարբերականը:**

1) Հայ ժողովրդին աշխարհում կատարվող իրադարձությունների մասին տեղեկություններ հաղորդելու համար:
2) Հայ ժողովրդին իր պատմությանը հաղորդակից դարձնելու համար:
3) Եվրոպայի հետ քաղաքական հարաբերությունների հիմքեր գցելու համար:
4) Հայության հասարակական կյանքը կազմակերպելու և ուղղորդելու համար:

14 **Որտե՞ղ է գտնվում Արձնի գյուղը:**

1) Արևելյան Տիգրիսի հովտում
2) Արագածի ստորոտում
3) Արևելյան Եփրատի հովտում
4) Արաքսի հովտում

Կարդացե՛ք մեջբերված խոսքը և պատասխանե՛ք 15-րդ և 16-րդ հարցերին:

«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար.... Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

15 **Որտե՞ղ է հնչել հետևյալ ելույթը:**

1) Հայոց ազգային համախորհրդակցությունում
2) Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նիստում
3) Արևմտահայերի ազգային համագումարում
4) Երևանի Հայոց ազգային խորհրդի նիստում

16 **Ո՞վ է վերը բերված խոսքերի հեղինակը:**

1) Նիկոլ Աղբալյան
2) Թովմաս Նազարբեկյան
3) Արամ Մանուկյան
4) Մովսես Սիլիկյան

17 **Ո՞վ է ստորև բերված խոսքերի հեղինակը:**

«Ես չեմ, որ կհրավիրեմ ձեզ, արտասահմանյան հա՛յ երիտասարդներ, այլ դժբախտ հայրենիքին հողն ու քարը իրենց արյունով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներն են, որ կոչ կընեն ձեզի՝ զենքի, զինավարժության ու վրեժխնդրության»:

1) Նիկոլ Դուման
2) Գևորգ Չավուշ
3) Հրայր Դժոխք
4) Անդրանիկ Օզանյան

18 **Ո՞ր շարքում են ընդգրկված միայն Ք. ա. II հազարամյակում Հայկական լեռնաշխարհում ստեղծված պետական կազմավորումները՝**

1) Հայասա, Արատտա, Միտանի, Թեգարամա
2) Հայասա, Նաիրի երկրներ, Միտանի, Թեգարամա
3) Հայասա, Նաիրի երկրներ, Միտանի, Արմանի
4) Հայասա, Նաիրի երկրներ, Արմանի, Թեգարամա

19 **Թվարկված գործիչներից ո՞վ է նշել, որ օտար գիտական մտքին հետևելուն զուգահեռ անհրաժեշտ է չմոռանալ կամ չանտեսել սեփական ժողովրդի ձեռքբերումները:**

1) Վիկտոր Համբարձումյան
2) Գրիգոր Մագիստրոս
3) Մատթեոս Զուղայեցի
4) Անտոն Գարագաշյան

20 **Նշված պայմանագրերից որի՞ կնքման արդյունքում է Հայաստանը գտնվել քաղաքական ավելի բարենպաստ իրավիճակում:**

1) Նվարսակ
2) Արտաշատ
3) Դամասկոս
4) Կարակորում

21 **Ընտրել տերմինի կամ հասկացության ճիշտ բացատրությունը:**

1) Մայիսյան ապստամբության ժամանակ բոլշևիկների ազդեցության տակ անցած զրահագնացքը կոչվում էր «Վարդան Մամիկոնյան»:
2) Մարաշում Սարգիս Ճեպեճյանի ղեկավարությամբ քեմալականների դեմ հայերի պաշտպանական մարտերը գլխավորող մարմինը կոչվում էր ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ:
3) 1920թ. ամռանը նախաստորագրված խորհրդա–քեմալական փաստաթուղթը կրում էր «Սրտագին և անկեղծ բարեկամության պայմանագիր» անվանումը:
4) Տաթևում հրավիրված համազանգեզուրյան 1–ին համագումարում Զանգեզուրը հռչակվեց «Լեռնահայաստան»:

22 **Ներկայացված պատճառներից կամ հետևանքներից ո՞րն է ճիշտ:**

1) Ավարայրի ճակատամարտում նահատակված հայորդիներին սրբերի շարքին դասելու համար հիմք էր ծառայել IV դարի առաջին կեսին սահմանված կարգը:
2) Արճեշի ճակատամարտի հաղթական ավարտից ոգևորված հայ ապստամբները շարժվեցին դեպի Բագրևանդ գավառ:
3) 720-ական թթ. հայերի նկատմամբ ճնշումները սաստկանում էին արաբական զորքերի պարբերաբար կրկնվող արշավանքների պատճառով:
4) VII դարի 60-70-ական թթ. Հայաստանի շարունակվող տնտեսական ու քաղաքական անկումը նրա անկախության կորստի հետևանք էր:

23 **Թվարկվածներից որո՞նք են արևմտահայության նկատմամբ Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության որդեգրած քաղաքականության արդյունքներ:**

ա) Առաջին անգամ պաշտոնապես ճանաչվեց և ձևակերպում ստացավ Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը՝ որպես վարչական առանձին միավոր՝ «Թուրքահայաստան» անունով:
բ) Ժամանակավոր կառավարությունը ճանաչեց Արևմտյան Հայաստանի անկախությունը:
գ) Ռուսական զորքերը անհապաղ դուրս էին բերվում թուրքերից գրաված տարածքներից:
դ) Ռուսական նոր իշխանությունը սկսեց հայկական մարզերում հայանպաստ քաղաքականություն իրականացնել:
ե) Ժամանակավոր կառավարությունը հրահանգեց թույլատրել արևմտահայերին վերաբնակվելու հայկական երեք մարզերում:
զ) Հատուկ որոշմամբ Արևմտյան Հայաստանում հաստատված բոլոր քրդերը տեղահանվելու էին:

1) գ, ե, զ
2) ա, դ, զ
3) բ, գ, զ
4) ա, դ, ե

24 **Թվարկվածներից որո՞նք են Դամասկոսում կնքված հայ–արաբական դաշնագրի պայմաններից:**

ա) Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
բ) Հայաստանում տեղակայվելու էին սահմանափակ քանակությամբ արաբական զորքեր:
գ) Հայոց եկեղեցիներն ազատվելու էին հարկերից:
դ) Արաբական խալիֆայությունը ճանաչում էր Հայաստանի տարածքային ամբողջականությունը:
ե) Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 15-հազարանոց այրուձի:
զ) Պարսիկների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
է) Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը վճարելու էին այնքան, որքան կամենային:

1) ա, ե, է
2) բ, դ, զ
3) ա, զ, է
4) բ, ե, զ

25 **Թվարկվածներից որո՞նք են 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների հետևանքներ:**

ա) Հայությունը մարտական լուրջ փորձառություն անցավ:
բ) Ավելի գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների միասնականության գաղափարը:
գ) Ամրապնդվեց հայերի և կովկասյան թաթարների ռազմաքաղաքական դաշինքը:
դ) Բարձրացավ հայերի վստահության աստիճանը. նրանք պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչ բարյացակամ հարևաններին:
ե) Հայ հոգևորականության հեղինակությունն աճեց որպես զինված պայքարի կազմակերպիչ:
զ) Սկսեց արծարծվել երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը:
է) Ռուսական մեծապետական շովինիզմն սկսեց տեղի տալ, թուլացավ ոչ ռուս ժողովուրդների ազգային–գաղութային ճնշումը:

1) ա, բ, դ
2) բ, գ, ե
3) ա, դ, զ
4) բ, գ, է

26 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

ա) Գյուլիստանի պայմանագրի կնքումը
բ) Երևանի գրավումը ռուսների կողմից
գ) Շամքորի ճակատամարտը
դ) Օշականի ճակատամարտը
ե) ռուսական զորքերի կողմից Սարդարապատի գրավումը
զ) Թուրքմենչայի պայմանագրի կնքումը
է) «Նոր տետրակի» ռուսերեն թարգմանությունն ու լույսընծայումը Պետերբուրգում
ը)Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումը
թ)Վ. Բեհբութովի նշանակվելը Հայկական մարզի կառավարչի պաշտոնում

1) բ, թ
2) գ, է
3) բ, է
4) ե, զ

27 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության:**

ա) խորհրդա–գերմանական չհարձակման պայմանագրի կնքումը
բ) Նելսոն Ստեփանյանի զոհվելը
գ) 390–րդ դիվիզիայի կազմացրումը
դ) հատուկ որոշումով Հայոց եկեղեցում Մեծ եղեռնի օրը նշելն արգելելը
ե) Նվեր Սաֆարյանի նշանակվելը Թամանյան դիվիզիայի հրամանատար
զ) Էջմիածնի վանքը փակելու վերաբերյալ ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշման ընդունումը
է) ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի գնդակահարությունը
ը) ԽՍՀՄ կառավարության կողմից խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի չեղյալ հայտարարելը

1) բ
2) է
3) դ
4) զ

28 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Սպիտակի երկրաշարժը
բ) «Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
գ) ՀՀ–ում եռաստիճան դատական համակարգի ներդրումը
դ) Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումը
ե) ՀՀ անկախության հանրաքվեն
զ) Հայոց համազգային շարժման առաջին համագումարի բացումը
է) ՀՀ–ում վարչատարածքային նոր միավորների՝ 10 մարզերի ստեղծումը
ը) Լևոն Տեր–Պետրոսյանի ընտրվելը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ
թ) ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհրդի վերանվանվելը Ազգային ժողով
ժ) ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1–ին համագումարի բացումը

1) ժ, զ, բ, ա, ը, դ, թ, գ, է, ե
2) ա, զ, ժ, բ, թ, ե, դ, ը, գ, է
3) ա, ժ, զ, բ, ը, դ, ե, թ, է, գ
4) ժ, զ, ա, բ, դ, ը, ե, թ, է, գ

29 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ:**

ա) Վարդանանց պատերազմի արդյունքը հայոց երկրի ներքին ինքնուրույնության պահպանումն էր:
բ) Խաղխաղի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
գ) Հայ իշխանների միջև առաջացած տարաձայնություններին Սաջյան ամիրաների միջամտության առիթը Նախճավան քաղաքի համար վեճն էր:
դ) 1137 թ. Հովհաննես Կոմնենոս կայսեր՝ Կիլիկիա արշավանքի պատճառը Թորոս I-ին միջերկրածովյան շրջանից դուրս մղելն էր:
ե) Անտիոքի իշխանի որդի Ֆիլիպին հայոց գահից զրկեցին նրա ոչ հայամետ քաղաքականության պատճառով:
զ) 1307 թ. Սիսի եկեղեցական ժողովի հետևանքը Հայոց եկեղեցու ծեսերի և արարողությունների մի մասի հարմարեցնելն էր հունական և ասորական եկեղեցիների դավանանքին:

1) ա, բ, գ
2) բ, դ, զ
3) ա, գ, դ
4) բ, ե, զ

30 **Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա) Դավիթ Ալավկաորդին XII դարում հայ իրականության մեջ առաջին անգամ փորձեց իրավական մեկ համակարգի մեջ ընդգրկել եկեղեցական և աշխարհիկ իրավունքը և ստեղծել միասնական օրենսդրություն:
բ) Միջնադարյան հայ իրավական մտքի գլուխգործոցը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» է, որը կազմվել է XII դարի վերջերին:
գ) Կաթողիկոս Ներսես Շնորհալու հեղինակած «Հայոց կանոնագիրքը» անդրադառնում է ամուսնա-ընտանեկան իրավունքի որոշ նորմերի:
դ) Պարսից արքա Պերոզը Հայաստանը թուլացնելու նպատակով հողեր ժառանգելու իրավունք շնորհեց սեպուհներին:
ե) Կիլիկիայում գործող բարձրագույն դպրոցների շարքում մեծ հռչակ էր վայելում Սսի համալսարանը, որի հիմնադրմանը աջակցել էր Գրիգոր Մլիճեցին:
զ) Ղևոնդ պատմիչը նկարագրել է հայ ժողովրդի հերոսական պայքարը պարսից տերության դեմ:

1) բ, դ, ե
2) բ, ե, զ
3) ա, բ, ե
4) ա, բ, դ

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 31- 35-րդ հարցերին:

«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով, և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, …… մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների… Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն … Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:

31 **Որտե՞ղ են հնչել այս խոսքերը:**

1) ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի նիստում
2) Երևանում՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստում
3) Մոսկվայում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում
4) ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության նիստում

32 **Ըստ սկզբնաղբյուրի՝ ո՞ւմ մեղքով է հայտնվել ԼՂԻՄ–ը Ադրբեջանի կազմում:**

1) Վլադիմիր Լենին
2) Սերգեյ Կիրով
3) Նարիման Նարիմանով
4) Իոսիֆ Ստալին

33 **Ըստ սկզբնաղբյուրի՝ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն:**

1) Ռուսաստանի Դաշնությունը և ԱՄՆ–ը
2) Հայաստանի Հանրապետության բնակիչները
3) միջազգային կառույցները
4) Լեռնային Ղարաբաղի բնակիչները

34 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Հենրիխ Պողոսյան
2) Զորի Բալայան
3) Վաչե Սարուխանյան
4) Յակով Զարոբյան

35 **Ե՞րբ են ասվել մեջբերված խոսքերը:**

1) 1988 թ. հունիսի 13
2) 1988 թ. հունիսի 15
3) 1988 թ. հուլիսի 18
4) 1988 թ. հուլիսի 20

36 **Նշված իրադարձություններից ո՞րն է վկայում Խալդի աստծո պաշտամունքի պահպանման մասին՝**

1) Արմավիրի պաշարում
2) Բաբելոնի ապստամբություն
3) Արածանիի ճակատամարտ
4) Արատտայի պաշտպանություն

37 **Ներկայացված պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ՝**

1) Հուստինիանոս I-ի ընդունած ժառանգության մասին հատուկ օրենքը նպաստեց Արևմտյան Հայաստանի հայ նախարարների իշխանության թուլացմանը:
2) Ժառանգական նախարարական խոշոր հողատիրության զարգացումը ուշ միջնադարում հանգեցրեց նրան, որ թագավորական հողատիրությունը ամփոփվեց Միջնաշխարհում գտնվող ոստանի սահմաններում:
3) VI դարի հայ եկեղեցական ժողովները Հայոց եկեղեցու դավանաբանությունը պաշտպանեցին բյուզանդական եկեղեցու ոտնձգություններից:
4) Բյուզանդիան վարում էր Արաբական խալիֆայության կենտրոնաձիգ ուժերին խրախուսելու քաղաքականություն:
5) Բյուզանդիան ծածուկ խրախուսում էր պարսից տերության դեմ VIII դարում ապստամբած հայերին:

38 **Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Արցախի Քթիշ ամրոցի պաշտպանները մեկ տարի հերոսաբար դիմադրեցին արաբական զորքերին:
2) Արաբ ամիրաների հարկային ու կրոնական դաժան հալածանքները դարձան 703թ. հակաարաբական ապստամբության պատճառ:
3) 748-750թթ. ապստամբությունն ընդգրկեց նաև Սասուն-Խութ գավառը:
4) Բագրատունիների Հայոց թագավորության ստեղծմանը նախորդած տասնամյակներին ուժեղացան Բագրատունի, Արծրունի, Արցախի, Սյունիքի հայկական իշխանությունները:
5) 850թ. սասունցիները մահապատժի ենթարկեցին Հայաստան ներխուժած արաբական զորքերի հրամանատար Յուսուֆին:
6) 703թ. հակաարաբական ապստամբության ժամանակ Հովհան Օձնեցի Հայոց կաթողիկոսը նամակով խալիֆից խնդրում է ճանաչել հայոց հավատքը և խուսափել արյունահեղությունից:

39 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները :**

1) Փարիզում Պողոս Նուբարի նախաձեռնությամբ հրավիրված ժողովը հայտնի է «Հայոց ազգային համագումար» անունով:
2) Մինչև 1991 թ. նոյեմբերի կեսերը նոր ինքնիշխան պետությունների ղեկավարների քննարկած միութենական պայմանագրի նախագծի վերջնական տարբերակում նոր միությունը բնութագրվում էր որպես «համադաշնային ժողովրդական պետություն»:
3) 1947 թ. ապրիլի 30–ից մայիսի 4–ը Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսի նախաձեռնող կազմակերպությունը կոչվում էր Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդ:
4) 1987 թ. հունիսի 18–ին 1915 թ. հայերի ցեղասպանությունը դատապարտած մարմինը կոչվում էր Եվրոպական միություն:
5) Էջմիածնում հիմնված մշակութային–պատմական ինստիտուտը 1925 թ. վերափոխվելուց հետո կոչվեց Գիտության և արվեստի ինստիտուտ:
6) 1988 թ. փետրվարի 20–ին ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի օրակարգում դրված հարցը վերնագրված էր՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Գերագույն խորհրդի միջնորդությունը՝ երկրամասը Ադրբեջանական ԽՍՀ–ից հանելու և Հայկական ԽՍՀ–ի կազմի մեջ մտցնելու մասին»:

40 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

1) Ք. ա. VIII հազարամյակում Արարատյան դաշտում գոյություն ունեին զարգացած վաղ երկրագործական հասարակություններ:
2) Բնիկ հայկական ավանդության համաձայն՝ Հայ(ա) աստծու անունով մեր ժողովուրդը կոչվել է հայ, իսկ երկիրը՝ Հայք, Հայաստան:
3) Միջնադարում հայկական ուժեղ պետություն է ստեղծվել Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափին ընկած Կիլիկիայում, որն ունեցել է մինչև 50. 000 քառ. կմ տարածք:
4) Հայերի ծագումնաբանության մասին վրացական ավանդությունը գրի է առնվել զարգացած միջանադարի վրաց հեղինակների կողմից:
5) Թորգոմա տունը եղել է Եփրատի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս Ք. ա.XX - Ք. ա. XVIII դարերում:
6) Հայասայի և Ասորեստանի միջև կնքվել է բարեկամության և փոխօգնության պայմանագիր:

41 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1) Հայաստանի Գերագույն խորհրդի 1990թ. օգոստոսին ընդունած փաստաթուղթը կոչվում էր «Հռչակագիր Հայաստանի պետական անկախության վերականգման մասին»:
2) Յակով Զարոբյանի նախաձեռնությամբ ԽՄԿԿ կենտկոմին ՀԿԿ կենտկոմի ուղարկած ծավալուն նամակը վերնագրված էր «1915 թ. հայերի զանգվածային բնաջնջման 50–ամյակի հետ կապված միջոցառումների մասին»:
3) Խորհրդային իրականությունն առանց ուժային միջոցների, գաղափարական ճանապարհով փոփոխելու պայքարի ուղին ընտրած մարդկանց կոչում էին իրավապաշտպաններ:
4) Խորհրդային Հայաստանում ձևավորված գաղտնի կազմակերպություններից «Հայկական երիտասարդական միություն»–ը հայտնի էր «Յոթ հայրենասերներ» անունով:
5) Օրենսդիր բարձրագույն մարմինը, որը 1988 թ. հունիսի 15–ին քննարկեց ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20–ի որոշումը, Հայաստանի Ազգային ժողովն էր:
6) 1989 թ. օգոստոսի 16–ին Ստեփանակերտի պետական թատրոնի շենքում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում 80 հոգուց ընտրված մարմինը կոչվում էր Ազգային խորհուրդ:
7) Հայաստանում 1966 թ. ապրիլի 24–ին ստեղծված նոր գաղտնի կազմակերպությունը կոչվում էր «Ազատ, Անկախ և Միացյալ կուսակցություն»:

42 **Գտնել ճիշտ պատասխանները:**
Ի՞նչ հետևանքներ ունեցան 1996 թ. նախագահական ընտրությունները.

1) Երկրի բոլոր քաղաքական ուժերի ղեկավարությամբ սկսվեցին հանրահավաքներ ու ցույցեր:
2) Պաշտոնական տվյալներով ձայների մեծամասնությամբ նախագահ ընտրվեց «Հանրապետություն» միավորման առաջադրած թեկնածուն:
3) Ձայների մեծամասնությամբ նախագահ ընտրվեց «Միասնություն» դաշինքի առաջադրած թեկնածուն:
4) ՀՀ նախագահ ընտրվեց ԱԺՄ առաջադրած թեկնածուն:
5) Ընդդիմադիր ուժերի կողմից առաջ քաշվեց կրկնակի ընտրությունների պահանջը:
6) Երկրում խորացավ քաղաքական ճգնաժամը:
7) ՀՅԴ–ն դադարեցրեց ընդդիմադիր պայքարը և սատարեց ընտրված ՀՀ նախագահին:

43 **Գտնել ճիշտ պատասխանները:**
Արցախյան հիմնախնդրի շուրջ տարվող աշխատանքների արդյունքում՝

1) 1993 թ. ընթացքում ԼՂՀ–ի խնդրով ՄԱԿ–ում ընդունվել է երեք բանաձև:
2) Արցախյան հիմնախնդիրը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա դարձավ 1992 թ. հունվարից, երբ ՀՀ–ն անդամակցեց ԵԱՀԿ–ին:
3) ԵԱՀԿ ձևաչափով ստեղծվել է արցախյան հիմնախնդրի լուծման հիմնական կառույցը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի, ԱՄՆ–ի և Գերմանիայի համանախագահությամբ:
4) 1999 թ. վերջին ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթնաժողովում փորձ արվեց Արցախյան հիմնախնդրի լուծումը կապել Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ:
5) ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով 1999թ. սկսվեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ուղղակի շփումները:
6) ՀՀ–ի համար խնդրի կարգավորման հիմքը եղել է պետությունների տարածքային ամբողջականության պահպանման իրավունքի ամրագրումը:
7) 1994 թ. ապրիլի 12–ի զինադադարից հետո սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը:

44 **Կատարել համապատասխանեցում:**

Քաղաքական կազմակերպություն	**Գործիչ**
ա. Հնչակյան կուսակցություն	1) Հակոբ Կալոյան
բ. Հայ հեղափոխական դաշնակցություն	2) Խաչատուր Մալումյան
գ. Բարենպատակ ընկերություն	3) Կարապետ Նշկյան
դ. Միություն ի փրկություն	4) Ներսես Աբելյան
ե. Պաշտպան հայրենյաց	5) Գրիգոր Մոսեյան
զ. Հայրենասերների միություն	6) Պետրոս Հայկազունի
	7) Ռուբեն Խանազատ

45 **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

ա. Հայոց ազգային կենտրոնական բյուրո
բ. Ազգային պատվիրակություն
գ. Ազգային սահմանադրություն
դ. Ազգային ժողով
ե. Հայոց տուն
զ. Պատգամավորական Կենտրոնական ժողով

1) դաշնակցության ղեկավար մարմին
2) Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ 1912 թ. ստեղծված մարմին
3) օրենսդիր մարմին, որն, ըստ Ազգային սահմանադրության, ընտրվում էր ամբողջ ազգի կողմից
4) Թիֆլիսում ստեղծված մարմին, որի գլխավոր նպատակը Հայկական հարցի լուծմանը նպաստելն էր
5) արևմտահայերի ներքին կյանքը կազմակերպող իրավական փաստաթուղթ
6) Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ հրավիրված Ռուսաստանում ապրող հայերի ժողով
7) ըստ «Որոգայթ փառացի»՝ հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմին

46 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

ա. շահապ	1) քրդական հակակառավարական ջոկատ
բ. չելլո	2) հողազուրկ գյուղացի
գ. աշար	3) քրդերից կազմված պատժիչ հեծելազնդեր
դ. մարաբա	4) քաղաքի կառավարիչ, քաղաքապետ
ե. համիդիե	5) բերքի 1/10-րդ մասով վճարվող հարկատեսակ
զ. շահաստան	6) բուն քաղաք
	7) վիլայեթի կառավարիչ

47 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Կարսի թագավորության ձևականորեն հպատակություն հայտնելը թյուրք-սելջուկներին
2) Անավարզայի վերածվելը Կիլիկիայի մայրաքաղաքի
3) Բերդուսի ճակատամարտը
4) Աղթամարի կաթողիկոսության հիմնադրումը
5) Թորոս II–ի կառավարման ավարտը
6) Հայոց կաթողիկոսի նստավայրի հաստատումը Հռոմկլայում

48 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Մոսկվայի «Հայրենասերների միության» գործունեության դադարեցումը
2) նշանավոր հայդուկ Հրայրի զոհվելը
3) Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքի չեղարկումը
4) «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի հիմնումը
5) Անդրանիկի՝ «Մարտական հրահանգներ» կանոնագիրքը հեղինակելը
6) Արաբոյի անդամակցելը «Դաշնակցություն» կուսակցությանը

49 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ՝**

1) Բաբելոնի գրավումը հայ-պարսկական զորքերի կողմից
2) Հայկազուն Երվանդական թագավորության անկախության վերականգնումը
3) Հայաստանի վերածումը սատրապության
4) Հայկական արքայական առաջին դրամների հատումը
5) Վահագնի գահակալումը
6) Բագարանի հիմնադրումը

50 **Ստորև նշված մեջբերումները դասավորել ըստ նրանցում նկարագրվող իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության:**

1) «Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»
2) «. . . եղավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:
3) «Անհնազանդ մի ազգ են. . . մեր միջև: Բայց եկ. . . ես իմս (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի հայ զորականներին) ժողովեմ և Թրակիա ուղարկեմ, և դու քոնը (այսինքն՝ Արևելյան Հայաստանի հայ զորականներին) ժողովի՛ր և հրամայի՛ր Արևելք տանել. . . »:
4) «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:
5) «Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»:
6) «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություիւն»:

51 **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1) Զվարթնոցատիպ եկեղեցու կառուցումը Անիում
2) Տրապիզոնի վրացա–բյուզանդական բանակցությունները
3) Հովհաննես–Սմբատ և Աշոտ թագավորների մահը
4) Փիլարտոսի իշխանության հիմնադրումը
5) Հայ բնակչության կոտորածը Մանանաղիի Սմբատաբերդ լեռան մոտ
6) Ալփ Արսլանի զորքերի կողմից Անիի գրավումը և ավերումը

52 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից որո՞նք են ճիշտ:**

1) Առաջին աշխարհամարտի ժամանակ ցարիզմի կողմից հայ կամավորական ջոկատների ցրման գլխավոր պատճառը հայերի անկախական ձգտումներն էին:
2) Արցախից Ռուսաստան Հովսեփ Էմինի հեռանալու պատճառը Սիմեոն Երևանցու և տեղի ուժերի կողմից նրան չօժանդակելն էր:
3) Զեյթունի 1862 թ. ապստամբության ժամանակ զեյթունցիների հետ օսմանյան կառավարության փոխզիջման գնալու պատճառը Անգլիայի կողմից Թուրքիայի ներքին կյանքին միջամտությունն էր:
4) Կարինում 1883թ. ապրիլին տեղի է ունեցել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը, որն առաջին քաղաքական դատավարությունն էր Օսմանյան կայսրությունում:
5) 1914 թ. կնքված ռուս–թուրքական համաձայնագրի չիրագործվելու պատճառներից էր Բալկանյան երկրորդ պատերազմը:
6) Անգլիայի և Ֆրանսիայի կողմից 1915 թ. Դարդանելի գործողությունը ձեռնարկելու պատճառը Կիլիկիայի և արաբական տարածքների գերմանական զորքերի ռազմակալման կասեցումն էր:

53 **Ի՞նչ արդյունք ունեցան V դարի հայ ազատագրական պատերազմները՝**

1) Հայաստանի երկու հատվածները միավորվեցին
2) Պահպանվեցին հայոց պետականության մի շարք բաղադրիչներ
3) Հայերը պահպանեցին քրիստոնեական դավանանքը
4) Ստեղծվեց հայկական մարզպանություն
5) Հայ ժողովուրդը փրկվեց մահմեդականացումից
6) Պատմական Հայաստանի մի հատվածում ստեղծվեց հայոց թագավորություն

54 **Ստորև տրված պնդումներից գտնել որո՞նք են ճիշտ:**

1) XVI դ. առաջին կեսին զեյթունցիները պարտավորվեցին օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ՝ պահպանելով իրենց ներքին ինքնուրույնությունը:
2) Տիգրան Մեծի տերության տարածքը կազմված էր երեք կարգի հատվածներից՝ բուն հայկական հողեր, հպատակ թագավորություններ և տնտեսական ու մշակութային ազդեցության ոլորտում գտնվող երկրներ:
3) VIII դարում Սասանյան Պարսկաստանը մեծ վտանգ էր ներկայացնում Հայաստանի համար՝ չնայած նրան, որ լրջորեն թուլացել էր:
4) Պապի վարած անկախ քաղաքականության արդյունքում Հայաստանից վտարվեցին բյուզանդական զորքերը:
5) Դվինի 554 թ. ժողովում վերջնականապես հաստատվեց Հայոց եկեղեցու ազգային ինքնուրույնությունը:
6) Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցներից էր Աղվանից եկեղեցին, որի կաթողիկոսանիստ կենտրոնը XIV դարի վերջերից Գանձասարի վանքն էր:

55 **Ընտրել այն տերմիններն ու հասկացությունները, որոնք բնորոշ չեն եղել Նոր տնտեսական քաղաքականությանը:**

1) գյուղատնտեսության կոլեկտիվացում
2) պարենմասնատրում
3) վարձու աշխատանք
4) պարենային հարկ
5) հացահատիկի արտադրության պետական մենաշնորհ
6) շուկայական հարաբերություններ
7) ազատ առևտուր

56 **Ստորև ներկայացված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

1) Հայոց արքա Խոսրով I–ի որդեգրած ճիշտ քաղաքական դիրքորոշման արդյունքում Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեգեոնները:
2) Ք.ա. 735թ. Ասորեստանը չկարողացավ գրավել Տուշպան և չվերականգնեց իր դիրքերը Առաջավոր Ասիայում:
3) Ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման՝ հռոմեական կայսրը Խոսրով II-ին վերադարձրեց Հայաստանից թալանված ավարը:
4) Արտաշես II-ը ռազմական բարեփոխումներից հետո վերագրավեց Վիրքը:
5) Տիգրան III-ի ինքնուրույն և պարթևամետ քաղաքականություն վարելու մասին վկայում է նրա կողմից պահլավերեն մակագրությամբ դրամների թողարկումը:
6) Հելլենիստական դարաշրջանի վերջին փուլում Սասանյանները փորձեցին հայ ժողովրդի շրջանում տարածել զրադաշտականություն:

57 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1) Թամանյան դիվիզիայի կազմացրումը
2) Ուրուգվայի խորհրդարանի հանձնարարական տալը իր կառավարությանը՝ Հայկական հարցը ՄԱԿ–ի քննարկմանը ներկայացնելու մասին
3) Պոտսդամի կոնֆերանսի ավարտը
4) Հայկական ատոմակայանի բացումը
5) ՀՀ–ում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը
6) Հայաստանում Գերագույն խորհրդի առաջին այլընտրանքային ընտրությունների անցկացումը
7) ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը
8) ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը

58 **Թվարկվածներից որո՞նք են խախտում ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1) Հայաստանի անդամակցելը ԵԱՀԿ–ին
2) ՀՀ ՄԱԿ–ի լիիրավ անդամ դառնալը
3) Լորիս Ճգնավորյանի կողմից Գյումրիի մշակութային կենտրոնի հիմնումը
4) Քարվաճառի շրջանի ազատագրումը
5) ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրոպայի խորհրդին (ԵԽ)
6) Հորադիզի շրջանի ազատագրումը
7) Նորարար փորձառական արվեստի կենտրոնի բացումը Երևանում
8) ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը
9) Քառօրյա պատերազմը

59 **1828-1830 թթ. զանգվածային վերաբնակեցման հետևանքներ են `**

1) 70 000 արևմտահայերի վերաբնակվելը ռուսական տերությանն անցած տարածքներում
2) կարսեցիների հաստատվելը Գյումրիում, Շիրակի դաշտում և Ապարանում
3) 45 000 պարսկահպատակ հայերի տեղափոխվելը Արևելյան Հայաստան
4) բայազետցիների և ալաշկերտցիների հաստատվելը Սևանա լճի ավազանում
5) Էրզրումցիների հաստատվելը Սուրմալուում, Դարաչիչակում և Փամբակում
6) Ախալքալաքում և Ախալցխայում հայ բնակչության տեսակարար կշռի շեշտակի աճը, նախորդ ժամանակներին բնորոշ ժողովրդագրական իրավիճակի վերականգնումը
7) Մուշ և Վան քաղաքների զրկվելը մեծ թվով հայ առևտրականներից ու արհեստավորներից, որոնք կարևոր տեղ ունեին Օսմանյան կայսրության տնտեսության մեջ

60 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Կարսի պայմանագրի համաձայն՝ Նախիջևանում ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտե՝ Մոսկվայի վերահսկողության ներքո:
2) Խորհրդային Հայաստանին Առաջին հանրապետությունից փոխանցվել էր հարևան երկու երկրների հետ տարածքային–սահմանային չլուծված խնդիրների «ժառանգությունը»:
3) Հայ–ադրբեջանական տարածքային խնդիրները կապված էին Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի հետ, որոնք, ի վերջո, բոլորը ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի ջանքերով տրվեցին Ադրբեջանին:
4) ՀՍԽՀ կառավարությունը 1921 թ. հունիսի 13–ին պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումն ընդունելու հերթական կոչն է ուղղել Արցախի կառավարությանը՝ նշելով, որ երկրամասը լինելու է Հայաստանի կազմում:
5) ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. հուլիսի 4–ի նիստում ընդունել էր արդարացի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը միացնելու Խորհրդային Հայաստանին:
6) Հայ–վրացական տարածքային խնդիր էր նաև Ջավախքի հարցը, որը ՌԿ(բ) Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի ջանքերով լուծվել է Վրաստանի օգտին:

61 **Առանձնացնել այն պայմանները, որոնք տեղ են գտել 1829 թ. Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրում:**

1) Կարսը, Էրզրումը և Մուշը ռուսները վերադարձրեցրին Օսմանյան կայսրությանը:
2) Ռուսաստանին էին անցնում Ախալքալաքը և Ախալցխան:
3) Ռուսաստանին էր անցնում նաև Արևմտյան Հայաստանի զգալի մասը՝ Կարսը, Արդահանը, Կաղզվանը և Օլթին:
4) Ռուսաստանը Դանուբյան շրջանում ստանում էր Բեսարաբիան:
5) Ռուսաստանին էին անցնում սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով:
6) Ազատ առևտրի իրավունք էին ստանում երկու կողմերի հպատակները:
7) Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին վճարել 20 միլիոն ռուբլի ռազմատուգանք:

62 **Թվարկվածներից որո՞նք են արդի կրթամշակութային կյանքի իրական արդյունքներ:**

1) Հայաստանում դադարեցին գործելուց գրողների և արվեստագետների բոլոր միությունները:
2) Սփյուռքահայ նկարչուհի Սոնիա Պալասանյանի նախաձեռնությամբ 1993 թ. Երևանում բացվեց Նորարար փորձնական արվեստի կենտրոնը (ՆՓԱԿ)՝ սեփական պատկերասրահով:
3) Հայաստանում իր գործունեությունը վերսկսեց աշխարհահռչակ դիրիժոր Օհան Դուրյանը:
4) Գևորգ Գևորգյանը ստեղծեց Գարեգին Նժդեհին նվիրված հուշահամալիրը Կապանում:
5) Արամ Ղարաբեկյանը 2000 թ. ստանձնեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարությունը:
6) ՀՀ-ում ներդրվել է պարտադիր միջնակարգ կրթություն՝ 12-ամյա տևողությամբ և եռաստիճան հանրակրթական ծրագրերով:
7) Երևանում կանգնեցվել է Արա Շիրազի «Հովհաննես Բաղրամյան» ձիարձանը:

63 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

1) Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի են ունեցել զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Հայաստանում նման մասշտաբի ելույթներ եղան նաև 1980-ական թթ.:
2) Անկախության հռչակագրի ընդունումից երկու ամիս անց ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակել է անկախ պետություն:
3) Հայաստանի Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը, որ ստեղծվել էր 1992 թ. նոյեմբերի 15–ին, զբաղվում էր նոր Սահմանադրության նախագծի մշակմամբ:
4) Մինչև ՀՀ անկախության հռչակումը երկրում արդեն ներդրվել էր բազմակուսակցական համակարգ:
5) Հետխորհրդային շրջանի ՀՀ Գերագույն խորհրդում ամենամեծ խմբակցությունն ուներ ՀԿԿ–ն:
6) ՀՀ Սահմանադրության փոփոխությունների առաջին տարբերակը հաստատվել է ՀՀ նախագահական չորրորդ ընտրություններից հետո:
7) ՀՀԿ–ն, ՀՅԴ–ն ու ՕԵԿ–ը 2003 թ. մայիսի 25–ի ԱԺ ընտրություններից հետո ստորագրել են քաղաքական կոալիցիայի համաձայնագիր:

64 **Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1) Տրդատ II-ի արշավանքը Տիզբոն
2) Ոսխայի ճակատամարտը
3) Հռոմեական կայսր Կարակալլայի զորքերի ջախջախումը Հայաստանում
4) Մազքութների ջախջախումը Ցլու գլուխ լեռան ճակատամարտում
5) Համազասպ Մամիկոնյանի նշանակումը հայոց սպարապետ
6) Արշակ III-ի գահակալության սկիզբը
7) Վռամշապուհի գահակալության սկիզբը
8) Խոսրով IV-ի երկրորդ անգամ հայոց գահ բարձրանալը

65 **Թվարկվածներից որո՞նք են խախտում 1720–ական թթ. տեղի ունեցած դեպքերի տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1) Իվան Կարապետի ժամանումը Արցախ
2) պարսից շահին ապստամբներից պաշտպանելու պատրվակով Պետրոս Առաջինի կազմակերպած արշավանքի սկիզբը Անդրկովկաս
3) թուրքական բանակի կողմից Թիֆլիսի գրավումը
4) Կ. Պոլսի ռուս–թուրքական պայմանագրի կնքումը
5) Կարբի գյուղի դիմադրությունը թուրքական բանակին
6) Երևանի պաշարման սկիզբը թուրքական զորքերի կողմից
7) Հալիձորի ճակատամարտը
8) հայ զինվորականության մի մասի՝ Ավան և Թարխան հարյուրապետերի գլխավորությամբ, ռուսական բանակ տեղափոխվելը
9) Գյուլիստանի սղնախի պայքարի շարունակումը թուրքական նվաճողների դեմ Աբրահամ սպարապետի գլխավորությամբ

66 **Գտնել ճիշտ պատասխանները:**
1918 թ. մարտի 3–ին Բրեստ–Լիտովսկում ստորագրված պայմանագրի հետևանքով՝

1) Թուրքիան պարտավորվում էր հրաժարվել Հայաստանին հանձնված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից:
2) Օսմանյան Թուրքիային անցան Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը:
3) Ռուսաստանը իր զորքերը շուտափույթ դուրս հանեց Կարսի և Բաթումի մարզերից:
4) Ռուսաստանը պարտավորվեց ճանաչել Արևմտյան Հայաստանը որպես արևմտահայության հայրենիք:
5) Ռուսաստանը դադարեցրեց իր մասնակցությունը Առաջին աշխարհամարտին:
6) Զորացրվեց Հայկական կորպուսը:
7) Կովկասում մնաց ընդամենը ռուսական երկու կորպուս:

67 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

1) Աբդուլ Համիդ II–ի կողմից քրդական հեծելազնդեր ստեղծելու պատճառներից էր քրդերին հակակառավարական գործողություններից հեռու պահելը:
2) Սան Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը ձեռք բերեց միայն Կարսը, Կարինը,Կաղզվանը, Օլթին, Արդահանը:
3) 1724 թ. Էրզրումի պայմանագրով Ռուսաստանը տեր դարձավ մերձսևծովյան տարածքներին:
4) Արցախի XVIII դ. 20–ական թթ. զինված պայքարի ընթացքում հայ ազատագրական ուժերը թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ:
5) Բեռլինի պայմանագրով Օսմանյան կայսրությունը հետ ստացավ Բայազետը, Կարսը:
6) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Անդրկովկասում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասի կոմիսարիատը:
7) Պարսկական շահը ճանաչել է Դավիթ բեկի իշխանությունը, նրա հետ դաշինք է կնքել և իրավունք վերապահել դրամ հատելու:

68 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

1) Մեծ հայրենադարձության տարիներին Խորհրդային Հայաստան հայրենադարձվել է ավելի շատ մարդ, քան 1921–1936 թթ. և 1950–1982 թթ. ընթացքում միասին վերցրած:
2) ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1947թ. Խորհրդային Հայաստան պետք է ներգաղթեին ևս շուրջ 63 հազար սփյուռքահայեր:
3) Ամենամարդաշատ հայկական գաղթօջախները 1920–ական թթ. սկզբին Ֆրանսիայում և ԱՄՆ–ում էին, որոնց բարեկամական վերաբերմունքի շնորհիվ ապաստան էին գտել հարյուրհազարավոր հայեր:
4) Հայկական հարցը քննարկվել է Լոզանի կոնֆերանսում, որտեղ էլ փաստորեն մոռացության է տրվել Սևրի պայմանագիրը:
5) Հայկական հարցի արդարացի և վերջնական լուծման ամբողջ ծանրությունն իր վրա էր վերցրել խորհրդային պետությունը:
6) Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսը, ներգաղթի կազմակերպման, Հայրենիք–Սփյուռք կապերի ամրապնդման հարցերը քննարկելուց բացի, փաստաթուղթ էր պատրաստել հայկական հողային պահանջների վերաբերյալ և ներկայացրել ԱՄՆ–ի նախագահ Ռուզվելտին:

69 **Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին վերաբերող պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Դավադիր այս փաստաթղթի ընդունումից երկու ամիս անց Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու ռազմական գործողություններ սկսեց Հայաստանի ու Վրաստանի դեմ:
2) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը տեղի ունեցավ Անկարայում և նպաստեց ռուս–թուրքական բարեկամության ամրապնդմանը:
3) Համագումարը կարևոր դեր խաղաց Արևելք–Արևմուտք համագործակցությունն ամրապնդելու գործում:
4) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի ստեղծած «Քարոզչության և գործողության խորհուրդը» 1920 թ. սեպտեմբերի 18–ին ընդունեց մի բանաձև–փաստաթուղթ, որի հիմնական դրույթներն ամբողջությամբ ուղղված էին ՀՀ–ի և հայ ժողովրդի դեմ:
5) Այդ խորհրդի մշակած փաստաթղթի համաձայն՝ Ռուսաստանից պահանջվում էր «թուրք-հայկական նոր կոտորածները» կանխելու պատրվակով որպես փրկարար և հաշտարար մտնել Հայաստան:
6) Այդ բանաձևով առաջարկվում էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել քեմալականներին և Հայաստանի վրա նրանց ռազմարշավի միջոցով նպաստել վերջինիս խորհրդայնացմանը:

70 **Ներկայացված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Հայաստանում մոնղոլական տիրապետության հետևանքով այնքան շատ հայ բնակչություն էր գաղթել Ղրիմի թերակղզի, որ դրա հարավ-արևելյան շրջանը հաճախ անվանում էին Ծովային Հայաստան:
2) XIV դարի վերջերից հայոց կաթողիկոսական Աթոռի փոխադրումը Հայաստան դարձել էր մեծ անհրաժեշտություն:
3) Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը կարգավորում էր օսմանյան կայսրության հայ համայնքի հոգևոր և աշխարհիկ կյանքը:
4) Թուրք-պարսկական պատերազմների հետևանքով Իրանի խորքերը գաղթեցված հայերը XVI դարի սկզբներին հիմնեցին Նոր Ջուղան:
5) Արևմտյան երկրների, մասնավորապես Հռոմի օժանդակությամբ հայոց պետականությունը վերականգնելու քարոզչությունը Կիլիկիայում և Հայաստանում լայն տարածում ստացավ հայ բնակչության մեջ XV - XVII դարերում:
6) Նադիր շահի տիրապետության շրջանում Արցախի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի հայ իշխանները սկսեցին կոչվել մելիքներ:

71 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել առաջինը:**

1) Բաբը Ալիի ցույցը
2) Մայիսյան բարենորոգումների ծրագրի հանձնումը սուլթանին
3) Խանասորի արշավանքը
4) Գում Գափուի խաղաղ ցույցը
5) Շենիկի գյուղապետ Գրգոյի տանը ինքնապաշտպանական ժողովի հրավիրումը
6) Աղասու նախագահությամբ Զեյթունի ժամանակավոր կառավարության կազմվելը
7) Սարգիս Կուկունյանի արշավանքը
8) Գևորգ Չավուշի ու Անդրանիկի վրեժխնդիր լինելը Բշարե Խալիլից

72 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները:**

1) «Որոգայթ փառաց» գրքում պետության բարձրագույն օրենսդիր մարմինը պետք է կազմվեր ժողովրդի կողմից ընտրված փոխանորդներից (պատգամավորներից):
2) Նէպի տարիներին իրենց աշխատանքի շնորհիվ կայուն գյուղացիական տնտեսություն ստեղծած խավը հայտնի էր կուլակ անվանումով:
3) 1923 թ. նոյեմբերին Երևանում գումարված այն համաժողովը, որտեղ հնչակյանները հանդես եկան իրենց վերացման մասին հայտարարությամբ, կոչվեց ինքնավերացման համագումար:
4) Արցախյան շարժման սկզբում Երևանում տեղի ունեցող բողոքի հանրահավաքները գլխավորող մարմինը կոչվում էր ՀՀՇ:
5) ԽՍՀՄ–ում 1980-ական թվականների երկրորդ կեսին իրականացված քաղաքականությունը հայտնի է «վերակառուցում» անունով:
6) Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
7) ԱՄՆ–ում Հայ հեղափոխական դաշնակցության ստեղծած Հայկական ազգային խորհուրդը հայտնի է նաև Հայ դատի հանձնախումբ անունով:
8) 1919 թ. սեպտեմբերին ստեղծված Հայաստանի միավորված բոլշևիկյան կազմակերպությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի էր «Հայաստանի կոմիտե» անունով:

73 **Նշել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1) Պարոնտերը Բագրատունյաց Հայաստանում փոխարինում էր Արշակունիների շրջանի հայր մարդպետին:
2) Բագրատունյաց շառավիղներից ձևավորված խավը կոչվում էր ոստանիկներ:
3) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը կրում էր «Մեծ Մասն Մեծ Հայոց» անունը:
4) Պարսից արքայի և բյուզանդական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրը անվանել են «ամոթալի»:
5) Հերթ ոստիկանի «աշխարհագրով» ծխահարկը փոխարինվեց գլխահարկով:
6) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասի վրա կազմված վարչական միավորը կոչվում էր «Ներքսագոյն Հայք»:
7) Արշակունյաց Հայաստանում արքունիքը կոչվում էր երիցանի:
8) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:

74 **Ստորև տրված պնդումներից գտնել որո՞նք են ճիշտ:**

1) Անդրեաս Տեր–Մարուքյանի կերտած՝ Խաչատուր Աբովյանի հուշարձանը նոր շրջանի հայ կերպարվեստի առաջին կոթողային քանդակն է:
2) Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորել է Աղաթոն Հովնաթանյանի հետ:
3) Մաղաքիա Օրմանյանը գալիք սերունդներին ավանդել է զգուշանալ եվրոպական տերությունների քաղաքականությունից, որովհետև նրանց համար գլխավորը «շահն ու օգուտն է»:
4) XIX դ. վերջին հայ գեղանկարչության մեջ մինչ այդ բացառիկ նշանակություն ունեցող բնանկարի ժանրն իր տեղը զիջել է դիմանկարին:
5) Բյուզանդիայի պատմության, հայոց միջնադարի և Հայկական հարցի ուսումնասիրության ասպարեզում զգալի ներդրում է ունեցել Անտոն Գարագաշյանը:
6) Անտոն Գարագաշյանի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը ընդգրկում է հայ ժողովրդի ծագումից մինչև V դ. ավարտն ընկած ժամանակաշրջանը:

75 **Թվարկվածներից որո՞նք ճիշտ չեն արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:**

1) Ստալինի անձի պաշտամունքի ձևավորման հետևանքը ԽՍՀՄ–ի հաջողություններում և հաղթանակներում ժողովուրդների դերի թերագնահատումն էր:
2) 1965 թ. Մեծ եղեռնի տարելիցին նվիրված միջոցառումների անցկացումը հետևանք էր ազգային ինքնագիտակցության զարթոնքի:
3) Հայաստանում այլախոհական կազմակերպությունների հանդես գալը պայմանավորված էր ազգային զարթոնքով և կորցրած պատմական տարածքները վերադարձնելու գաղափարով:
4) Հայաստանում ազգային ինքնագիտակցության զարթոնքի պատճառը ԽՍՀՄ–ում ստալինիզմի վերացման գործընթացն էր:
5) Խորհրդային Հայաստանում բնակչության կենսամակարդակի աճի հետևանքը սփյուռքահայության մեծ հայրենադարձությունն էր:
6) Խորհրդային Հայաստանում հայրենադարձության հետևանքը ՀԽՍՀ ժողովրդագրական իրավիճակի վատթարացումն էր:
7) Կոլեկտիվացման արդյունքում խորհրդային երկրի գյուղատնտեսության վիճակը կտրուկ բարելավվեց, աճեց աշխատանքի արտադրողականությունը:

76 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Կարսի պայմանագրի ստորագրումը
2) Սևրի պայմանագրի ստորագրումը
3) Ալեքսանդրապոլի թուրք–հայկական հաշտության պայմանագրի կնքումը
4) Խորհրդային Ռուսաստանի ճնշման ներքո թուրքական զորքերի հեռանալը Ալեքսանդրապոլից
5) Մոսկվայում «Ռուս–թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրի ստորագրումը
6) Հովհաննես Ադամյանի կողմից եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքի ստեղծումն ու ցուցադրումը
7) Զանգեզուրի խորհրդայնացումը
8) Արևելքի ժողովուրդների 1–ին համագումարը

77 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ՝**

1) «Էջմիածնի ավետարանի» ձեռագրի կազմումը
2) Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության երկրորդ գիրքը եզրափակող իրադարձությունները
3) «Կանոնագիրք Հայոց» երկի կազմումը
4) «Կնիք հաւատոյ» ժողովածուի կազմումը
5) «Հայոց Մեծ թվականի» սահմանումը
6) Առաջին բարձրագույն դպրոցի հիմնումը Հայաստանում
7) Առաջին հայ պատմիչի աշխատության տպագրումը իր կենդանության օրոք
8) Արևմտյան Հայաստանում հայոց դպրոցների բացումը Մեսրոպ Մաշտոցի նախաձեռնությամբ

78 **Ք. ա. I դարի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ՝**

1) Ատրպատականի թագավորության միացումը Հայոց թագավորությանը Արտաշես II–ի օրոք
2) Արտաշես II–ի օրոք Հայաստանում բոլոր հռոմեացիների ոչնչացումը
3) Հայոց արքայի դավադրական սպանությունը Արտաշատ քաղաքում
4) Հայոց արքայի և թագուհու հրաժարվելը մեծարանքի խոսքեր ասել Եգիպտոսի թագուհուն
5) Լուկուլլոսի զորքերի հեռացումը Հայաստանից
6) Հայ-պարթևական դաշինքի կնքումն Արտաշատում
7) Կրասոսի բանակի ժամանումը Ասորիք
8) «Յոթանասուն հովիտների» վերադարձը Հայաստանին

79 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Կարսի հանձնումը Բյուզանդիային Գագիկ Աբասյանի կողմից
2) Տաշիր-Զորագետի թագավորության ընդգրկումը վրացական պետության կազմի մեջ
3) Սամցխե-Ջավախքի իշխանության ստեղծումը
4) Լոռե քաղաքի գրավումը մոնղոլների կողմից
5) Ամբերդ ամրոցի ազատագրումը հայ-վրացական զորքերի կողմից
6) Երզնկայի գրավումը մոնղոլների կողմից
7) Գանձակ քաղաքի ավերումը մոնղոլների կողմից
8) Գագիկ II թագավորի սպանության վրեժի լուծումը

80 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Նշանավոր հայդուկ Քեռիի զոհվելը Ռևանդուզի կռվում
2) Արցախահայության 1–ին համագումարը Շուշիում
3) ՀՅԴ–ի 9–րդ ընդհանուր ժողովի գումարումը
4) Հայաստանի առաջին հանրապետությունում պետական լեզվի մասին օրենքի ընդունումը
5) Դրոյի ջոկատի կողմից Խնուսի գրավումը
6) Արարայի ճակատամարտը
7) Արևմտահայերի առաջին համագումարը
8) 26 կոմիսարների գնդակահարումը